Գիւղում բարքերը շատ պարզ են, իսկ ինչ վերաբերում է սիրալիրութեանը, գիւղացիք գերազանցում են քաղաքացիներին անգամ: Ամեն մի գիւղացի օտարին հանդիպելիս, պարտք է համարում մի քաղցր խօսքով նրան բարեւելու: Իսկ երեխաները բոլորը դուրս են թափւում փողոց ու բարձրաձայն բղաւում «օխայօ, օխայօ (բարեւ)», ջանալով իրանց փոքրիկ իրանները կռացնելու իսկ եւ իսկ մեծերի նման: Երեխաները Ճապոնում շատ գրաւիչ են ու կայտառ. բնաւ չունեն մեր երեխաներին յատուկ ամաչկոտութիւնը օտարի առաջ:

Գիւղը վաղուց արդէն ետ էինք թողել:

Երբ սարի գլուխը հասած՝ թեքւեցի դէպի ձորը ու աչք ձգեցի ցած, ինձ թւաց, թէ Դանտի դժոխքից մի տեսարան էր փռւել առջեւս իր ամբողջ չարագուշակ գեղեցկութեամբ:

Գոլորշու ահագին մռայլ քուլաները դուրս էին ժայթքում ամեն կողմից ձորի յատակին, եւ պատում ամբողջ շրջակայքը. յետոյ ծանր-ծանր բարձրանում էին վերեւ եւ կազմում թանձր, քաւթառ ամպեր, որոնք ծոյլ-ծոյլ սահում էին կանաչագգեստ լեռների վրայով ու խիստ աչքի ընկնող մի հակապատկեր էին կազմում նրանց մատաղ ու կենսալից թարմութեան հետ:

Ձորում ամեն-ինչ եռում էր, ծխում ու աղմկում:

Ջուրը թափով դուրս է ցայտում ու բարձրանում 3-ից մինչեւ 5 ոտնաչափ, տարածելով շուրջը ծծմբի խեղդող հոտը:

Ձորս կողմը, ժայռերից, գետնից, քարերից եւ մինչեւ անգամ ճամփի եզերքից ջրի փոքրիկ չարաճճի շատրւաններ են դուրս նետւում:

Պիտի գնաս մեծ զգուշութեամբը, քարէ քար թռչելով, թէ չէ հողը փուլ կը գայ ոտքիդ տակ ու կընկնես փոսը եւ կայրես ոտներդ: